Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի 09.12.2019-25.12.2020թթ. ժամանակահատվածի գործունեության

ԵՐԵՎԱՆ 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1.Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունեության արդյունքները.. 3

- Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստեր, որոշումներ, միջոցառումներ 3
- Հայտարարություններ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, կարծիք-դիրքորոշումներ, առաջարկություններ 6

ԲԱԺԻՆ 2. Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունեության հիմնական ուղղությունները 9

- Հակակոռուպցիոն կրթություն 9
- Արցախահայերի շահերի պաշտպանություն 11

ԲԱԺԻՆ 1.Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունեության արդյունքները

➢ Կոալիցիայի կառավարման խորհրդի նիստեր, որոշումներ, միջոցառումներ

- 2019 թվականի դեկտեմբերի 9-ին Իրավաբանների հայկական ասոցիացիան և Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան համատեղ միջոցառում իրականացրին՝ նվիրված կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան: Նույն միջոցառման ժամանակ ամփոփվեցին Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 5-րդ հոսքի արդյունքները, 10 ունկնդիրները ներկայացրին իրենց հետազոտական աշխատանքները, ստացան հավաստագրեր և մրցանակներ՝ գրքերի տեսքով: http://aac.am/1484.html
- 2019 թվականի դեկտեմբերի 9-ին Իրավաբանների հայկական ասոցիացիան և Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան համատեղ միջոցառում իրականացրին՝ նվիրված կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան: Նույն օրն անկացվեցին նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի ընտրությունները: Արդյունքում ՔՀԿ հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհուրդը կազմավորվեց 9 հոգի կազմով: http://aac.am/1495.html
- 2019 թվականի դեկտեմբերի 19-ին տեղի է ունեցել Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի նոր կազմով անդրանիկ նիստը, որի ընթացքում ընտրվել են առաջիկա մեկ տարվա ընթացքում 6-ական ամիս ժամկետով պաշտոնավարելիք Կոալիցիայի կառավարման խորհրդի նախագահները: http://aac.am/1546.html
- 2019 թվականի դեկտեմբերի 24-ին տեղի է ունեցել Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի հերթական նիստը, որում քննարկվել են Կոալիցիային այլ կոալիցիաների/ցանցերի անդամակցելու դիմումների քննարկման, անդամների կարողությունների զարգացմանը ուղղված էլեկտրոնային ուսուցման

նոր հարթակի ներկայացման և անդամների ընթացիկ տարվա գործունեության հակիրճ հաշվետվությունները: http://aac.am/1677.html

- 2020 թվականի հունվարի 22-ին Կոալիցիան որոշում է կայացրել պաշտպանել Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից Կարեն Զաղոյանի՝ որպես Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամի թեկնածուի առաջադրումը և լիազորել նրան հանդես գալ նաև, որպես Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի թեկնածու: http://aac.am/1763.html
- 2020 թվականի հունվարի 30-ին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Հայաստանի ՔՀԿ-ների կառուցողական երկխոսության ցանցի անդամ ՀԿ-ների ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ ԱԺ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստին, որի ընթացքում քննարկվել է ՀԸԳՀ-ի (CEPA) 366-րդ հոդվածով նախատեսված Քաղաքացիական հասարակության հարթակ ստեղծելուն առնչվող հարցեր: http://aac.am/1883.html
- 2020 թվականի փետրվարի 12-ին կայացել է Արդարադատության նախարարություն-ՔՀԿ աշխատաժողովը, որի ընթացքում ամփոփվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի հանրային քննարկման և Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով 2019թ. կատարած աշխատանքների հանրային մշտադիտարկման արդյունքները: http://aac.am/1928.html
- 2020 թվականի փետրվարի 25-ին Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Կոալիցիայի նախաձեռնությամբ պետական և հասարակական հատվածի լայն ներգրավվածությամբ կայացել է «Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թթ գործողությունների ծրագրի» հանրային քննարկումը: http://aac.am/2153.html
- 2020 թվականի մարտի 4-ին Իրավաբանների հայկական ասոցիացիան և Կոալիցիան հրավիրվել և մասնակցել են Եվրոպայի Խորհրդի գրասենյակի կազմակերպած «Քաղաքական բարեվարքությունը և էթիկան տեղական կառավարման համակարգում» խորագրով համաժողովին: http://aac.am/2167.html
- 2020 թվականի մարտի 11-ին Իրավաբանների հայկական ասոցիացիայի Երևանի գրասենյակում «ԻՀԱ-ն հանուն արդիականացման» ծրագրի շրջանակներում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի

անդամների համար կազմակերպվել է կարողությունների զարգացմանը միտված սեմինար-դասընթաց՝ «Տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտ միջոցներ» թեմայով: http://aac.am/2195.html

- 2020 թվականի ապրիլի 20-ին ամփոփվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից «ԻՀԱ-ն հանուն արդիականացման» ծրագրի շրջանակներում կազմակերպված առցանց դասընթացի արդյունքները: Հայտնվել է, որ նույն թվականի ապրիլի 15-ին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Հայաստանի ՔՀԿ-ների կառուցողական երկխոսության ցանցի անդամ 53 հասարակական կազմակերպությունների 58 ներկայացուցիչներ ավարտել են ՔՀԿ-ների/ՔՀԿ-ների կոալիցիաների ներքին կարողությունների զարգացման ուսումնական մոդուլի առաջին հոսքի առցանց դասընթացը, իսկ 30 կազմակերպություններից 35 ներկայացուցիչներ՝ երկրորդ հոսքի առցանց դասընթացը: http://aac.am/2656.html
- 2020 թվականի հուլիսի 14-ին կայացել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի նիստը: Նիստի ընթացքում կառավարման խորհրդի մի քանի անդամներ հանդես են եկել առաջարկներով, որոնց հիման վրա նախագծվել է Կոալիցիայի կողմից առաջիկայում իրականացվելիք գործողությունների ցանկը: http://aac.am/3018.html
- 2020 թվականի հուլիսի 16-ին Իրավաբանների հայկական ասոցիացիայի Երևանի գրասենյակում անկացվել է Ասոցիացիայի և Կոալիցիայի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն 4-րդ հանրապետական գիտաժողովի հաղթողների և մասնակիցների մրցանակների ու հավաստագրերի հանձնման արարողությունը: http://aac.am/3053.html
- 2020 թվականի օգոստոսի 14-ին կայացել է մասնագիտացված հակակոռուպցիոն դատական համակարգի ստեղծմանը նվիրված հանրային քննարկումը, որը կազմակերպել էր Իրավաբանների հայկական ասոցիացիան՝ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի, ԱԼԳ քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի և «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ի հետ, համագործակցությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի: http://aac.am/3207.html

- 2020 թվականի սեպտեմբերի 24-ին Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի, Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի, ԵՄ ԱլԳ քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի համատեղ կազմակերպմամբ առցանց հարթակում տեղի ունեցավ քննարկում՝ նվիրված սահմանադրական հակակոռուպցիոն մարմնի/մարմինների հայեցակարգին: Քննարկմանը մասնակցել են փաստաբաններ, քաղհասարակության կազմակերպությունների, պետական մարմինների շուրջ 70 ներկայացուցիչներ: http://aac.am/3233.html
- 2020 թվականի դեկտեմբերի 9-ին իրականացվել է կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված ամենամյա միջոցառումը: Այդ օրը նաև ամփոփվել է «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագիրը: Միջոցառմանը ներկա էր Հայաստանում Շվեդիայի դեսպանը: http://aac.am/3279.html
- 2020 թվականի դեկտեմբերի 9-ին կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել է ֆլեշմոբ Facebook սոցիալական ցանցում: http://aac.am/3617.html

Հայտարարություններ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, կարծիք-դիրքորոշումներ, առաջարկություններ

- 2019 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան արձագանքել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի անդրադարձին, մասնավորապես՝ ողջունել է ԳՐԵԿՈ-ի կողմից նույն թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված և 12-ին հրապարակված 4-րդ Գնահատման Զեկույցում հնչեցված այն գնահատականները, որոնք վերաբերում են հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի մաս կազմող մարմնի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման գործընթացին: http://aac.am/1504.html
- 2020 թվականի հունվարի 10-ին Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հակակոռուպցիոն կոալիցիան հրապարակել է հայտարարություն՝ Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման և

գործունեության միջազգային փորձի կիրառման ու հնարավոր հայեցակարգային մոտեցումների շուրջ հանրային քննարկման վերաբերյալ: Մասնավորապես, կոչ է արել քաղաքական իշխանություններին՝ վերահաստատելով իրենց հանձնառությունները թավշյա հեղափոխության արժեքների իրականացման գործում, համագործակցել դատաիրավական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի և անցումային արդարադատության իրականացման գործում մեծ ներդրում ունեցած ՔՀԿ-ների հետ՝ ձևավորելով երկրում անցումային արդարադատության իրականացման մեկ միասնական օրակարգ և հրատապ ձեռնամուխ լինել Հայաստանում անցումային արդարադատության հայեցակարգի մշակմանը և դրա հիման վրա գործողությունների ծրագրի մշակմանն ու իրականացմանը, որն իր մեջ կներառի անհրաժեշտ, իրատեսական և փաստարկված միջոցառումներ՝ անցումային արդարադատության իրականացման բոլոր չորս մեխանիզմներով՝ քրեական արդարադատության իրականացում, ճշմարտության որոնման գործընթաց, փոխհատուցման ծրագրեր, համակարգային բարեփոխումներ: http://aac.am/1745.html

- 2020 թվականի հունվարի 24-ին Կոալիցիան հայտարարություն է տարածել կոռուպցիայի ընկալման համաթվում Հայաստանի զբաղեցրած տեղի մասին: Մինչ այդ՝ հունվարի 23-ին «Թրանսփարենսի ինթերնեշնլ» համաշխարհային կազմակերպությունը, հիմնվելով հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունների վրա, հրապարակել էր կոռուպցիայի ընկալման համաթիվը, որում Հայաստանը 2019 թվականին 2018-ի համեմատ 7 կետով բարելավել է իր ցուցանիշը 42 միավորի և 180 երկրների շարքում զբաղեցրել է 77-րդ տեղը: http://aac.am/1870.html
- 2020 թվականի փետրվարի 14-ին Իրավաբանների հայկական ասոցիացիան և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան փորձագիտական կարծիք և առաջարկություններ են հրապարակել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ: http://aac.am/2083.html
- 2020 թվականի մարտի 4-ին հրապարակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Հայկական բիզնես կոալիցիայի կողմից գնումների ոլորտի բարեփոխումներին ուղղված առաջարկությունների փաթեթը, որն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին: http://aac.am/2163.html

- 2020 թվականի մարտի 19-ին Կոալիցիան հանդես է եկել «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստան» հիմնադրամի կողմից իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության» վերաբերյալ հայտարարությամբ: Ավելի վաղ՝ նույն թվականի փետրվարի 21-ին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստանը» ներկայացրել էր 2019թ. ՀՀ տնային տնտեսությունների շրջանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտության արդյունքները: http://aac.am/2212.html
- 2020 թվականի մարտի 24-ին հրապարակվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի նախագծի հանրային քննարկման և Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրով 2019 թվականին կատարված աշխատանքների հանրային մշտադիտարկման արդյունքների ներկայացման աշխատաժողովի ամփոփումը: http://aac.am/2256.html
- 2020 թվականի ապրիլի 6-ին Կոալիցիան հանդես է եկել ՀՀ Կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի նիստում հավանության արժանացած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ հայտարարությամբ: http://aac.am/2585.html
- 2020 թվականի մայիսի 9-ին Կոալիցիան հանդես է եկել հայտարարությամբ, որում կոչ է արել ՀՀ Ազգային ժողովին ձևավորել էթիկայի հանձնաժողով՝ քննելու մայիսի 8-ին տեղի ունեցած միջադեպում ներգրավված բոլոր պատգամավորների կողմից դրսևորած վարքն ու նրանց կողմից էթիկայի կանոնները խախտելու փաստերը, և տեղի ունեցածին տալ օբյեկտիվ գնահատական: http://aac.am/2736.html
- 2020 թվականի հունիսի 11-ին Իրավաբանների հայկական ասոցիացիան և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան հրապարակել են «Փաստահավաք հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ: http://aac.am/2806.html
- 2020 թվականի սեպտեմբերի 15-ին հրապարակվել են հակակոռուպցիոն դատական համակարգ ստեղծելու մասին օրենսդրական նախագծերի վերաբերյալ Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի առաջարկություններն ու դիտարկումները: http://aac.am/3212.html

- 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան հանդես է եկել Արցախի դեմ Ադրբեջանի զինված հարձակումը դատապարտող հայտարարությամբ: http://aac.am/3284.html

ԲԱԺԻՆ 2. Կոալիցիայի հաշվետու ժամանակահատվածի գործունեության հիմնական ուղղությունները

➢ Հակակոռուպցիոն կրթություն

- 2020 թվականի հունվարի 14-ին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան և Իրավաբանների հայկական ասոցիացիան համատեղ մեկնարկել են «Կոռուպցիայի դեմ պայքարի հայաստանյան համատեքստը. հիմնական առաջնահերթությունները և մարտահրավերները» թեմայով հանրապետական 4-րդ գիտաժողովը: http://aac.am/1747.html
- 2020 թվականի հունվարի 23-ին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան և Իրավաբանների հայկական ասոցիացիան համատեղ հայտարարել են «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի» 5-րդ հոսքի ընդունելության մասին: http://aac.am/1774.html
- 2020 թվականի մարտի 20-ին հեռավար մեթոդով կայացել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված «Կոռուպցիայի դեմ պայքարի հայաստանյան համատեքստը. հիմնական առաջնահերթությունները և մարտահրավերները» թեմայով հանրապետական 4-րդ գիտաժողովի բանավոր փուլը: http://aac.am/2217.html
- 2020 թվականի մարտի 19-ին մեկնարկել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից կազմակերպվող Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 5-րդ հոսքի դասընթացը: Ելնելով երկրում ստեղծված իրավիճակից՝ դասընթացն անցկացվել է հեռավար կարգով: http://aac.am/2234.html
- 2020 թվականի հունիսի 10-ին կայացել է Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 5-րդ հոսքի ավարտական միջոցառումը: Ելնելով երկրում ստեղծված իրավիճակից՝ դպրոցի փակման միջոցառումը անցկացվել է

հեռավար կարգով: Ավարտական միջոցառման ընթացքում ունկնդիրները հաջողությամբ ներկայացրել են իրենց ավարտական հետազոտական աշխատանքները: http://aac.am/2828.html

- 2020 թվականի հունիսի 22-ին մեկնարկել է «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրի իրագեկման սեմինարների շարքը: Մինչև նույն թվականի օգոստոս իրականացվել է թվով 55 սեմինար՝ Հայաստանի ողջ տարածքում գործող 55 բարձրագույն ուսումնական հաստատությունների և Սյունիքի, Շիրակի, Լոռու մարզերում գործող շուրջ 50 ավագ դպրոցների հետ: Տեղադրվում են հղումներից 4-ը: http://aac.am/2867.html , http://aac.am/2878.html , http://aac.am/2888.html , http://aac.am/2898.html:
- 2020 թվականի հուլիսի 8-ին Կոալիցիան հայտարարեց Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպվող Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 6-րդ հոսքի մեկնարկը: Դպրոցը կազմակերպվում էր Շվեդիայի Կառավարության աջակցությամբ իրականացվող «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրի շրջանակներում: http://aac.am/2955.html
- 2020 թվականի սեպտեմբերի 16-ին հայտնվել է, որ Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 6-րդ հոսքի հիմնական ուսուցման փուլը սկսված է: Առցանց ուսուցում են սկսել 200 ուսանողներ և աշակերտներ: http://aac.am/3222.html
- 2020 թվականի հոկտեմբերի 21-ին մեկնարկել է Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի 6-րդ հոսքի արտագնա խորացված փուլը: Փուլին մասնակցում էին դպրոցի 22 երիտասարդ ունկնդիրներ: http://aac.am/3367.html , http://aac.am/3435.html
- 2020 թվականի նոյեմբերի 13-ին Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի խորացված փուլի մասնակիցները հանդիպել են Արդարադատության նախարարության Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ՝ Մարիամ Գալստյանի հետ: http://aac.am/3485.html
- 2020 թվականի նոյեմբերի 16-ին, 17-ին և 26-ին առցանց հանդիպումներ են կազմակերպվել «Երիտասարդությունը հանուն հակակոռուպցիայի» ծրագրի աշակերտների և համապատասխան մարզերի դատախազների միջև: http://aac.am/3505.html , http://aac.am/3495.html, http://aac.am/3510.html

- 2020 թվականի նոյեմբերի 26-ին Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրներն առցանց հարթակում հանդիպել են ՀՀ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության դատախազ Անի Սարգսյանի հետ: http://aac.am/3500.html

➢ Արցախահայերի շահերի պաշտպանություն

- 2020 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Իրավաբանների հայկական ասոցիացիայի անվճար իրավաբանական օգնության շրջանակներում գրանցվել են «Հաղրութի դեօկուպացիա» և «Վերադարձ դեպի Դիզակ» հասարակական կազմակերպությունները: Նպատակը տեղահանված արցախցիների խնդիրների բարձրաձայնումն ու լուծումն է ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային հարթակներում:
- 2020 թվականի դեկտեմբերից ընթացքի մեջ է գտնվում Շուշիի և Քաշաթաղի բնակիչներին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը: